ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՀՀ ՔԾԽ ԾՁԲ- 17

ք. Երևան ***«04» մայիսի 2012 թ.***

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Յազերյանի, որը գործում է Խորհրդի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու մի կողմից, և «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է (այսուհետ՝ Համակարգ) Պատվիրատու հանձնել սույն պայմանագրի № 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, նախատեսված «ՀԾ-Հաշվապահ» Համակարգը և մատուցել դրա սպասարկման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ), համաձայն սույն պայմանագրի № 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունները և վճարել դրա համար:

2. Պայմանագրի գինը, ծառայությունների մատուցումը և վճարման պայմանները

2.1. Պայմանագրի գինը կազմում է 337 200 (երեք հարյուր երեսունյոթ հազար երկու հարյուր) ՀՀդրամ, որից 56 200, դրամը կազմում է ԱԱՀ-ն: «ՀԾ-Հաշվապահ» Համակարգի գինը կազմում է 277 200 դրամ, իսկ երկու անձի ուսուցման համար Պատվիրատուն վճարում է միանվագ 60 000 դրամ: Ծառայությունների գինը ներառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2. Ծառայությունների գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջելու ավելացնել, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնել այդ գինը: Հետագայում ավելի շատ աշխատատեղերի համար նախատեսված Համակարգին անցում կատարելու դեպքում Պատվիրատուն վճարում է համակարգերի անցման օրվա դրությամբ սահմանված արժեքների տարբերությունը:

2.3. Պատվիրատուն իրեն մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության (հավելված № 4) հիման վրա՝ համաձայն սույն պայմանագրի № 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի:

2.4. Կատարողը Ծառայությունները մատուցում է Պատվիրատուին սույն պայմանագրի № 2 հավելվածում նշված ծավալով և ժամկետում:

2.5. Ծառայություններն ընդունված են համարվում կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից (հավելված № 4):

2.6. Ծառայությունները մատուցվում են Կատարողի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.7. Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցված Ծառայությունների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի մատուցած Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2. Կատարողի կողմից սույն պայմանագրի հավելված № 2-ում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ծառայությունների մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված տույժերը:

3.1.3. Մինչև Ծառայություններն իրեն մատուցելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կատարողին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված ծախսերին համարժեք գինը և հատուցելու նրան պատճառված վնասները՝ առնվազն հինգ աշխատանքային օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կատարողին:

3.1.4. Առանց Ծառայությունների դիմաց վարձատրելու, միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի հանձնում Համակարգը կամ Ծառայությունների մատուցումն իրականացնում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար:

բ) Կատարողը խախտել է սույն պայմանագրի № 2 հավելվածով ժամկետը:

գ) Կատարողի կողմից հանձնված Համակարգը չի համապատասխանում սույն պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջներին:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Ընդունել Համակարգը և մատուցված Ծառայությունները և վճարել դրա համար:

3.2.2. Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողից ընդունել Համակարգը և մատուցված Ծառայությունները, իսկ պայմանագրի № 1 հավելվածով սահմանված պահանջների վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին:

3.2.3. Ժամանակին վճարել սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված գումարը՝ ըստ սույն պայմանագրի հավելված № 3-ում նշված ժամանակացույցի:

3.2.4. Ապահովել Համակարգի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովումների համապատասխանությունը Կատարողի կողմից ներկայացված պահանջներին:

3.2.5. Կատարողին տեղյակ պահել Համակարգը երրորդ կողմին փոխանցելիս:

3.3. Կատարողն իրավունք ունի՝

3.3.1. Պատվիրատուից պահանջելու վճարել սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված վճարման ենթակա գումարը:

3.3.2. Մինչև Համակարգը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջելու վճարել մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումը ստանալու պահը կատարված ծախսերի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3. Մինչև Համակարգը «Պատվիրատու»-ին հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն հինգ աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.4. Կատարողը պարտավոր է՝

3.4.1. Կատարել Ծառայությունների մատուցման վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.2. Սույն պայմանագրի հավելված № 2-ով սահմանված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Ծառայությունների մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացած օրվա համար վճարել սույն պայմանագրի 4.3 կետում նախատեսված տույժը:

3.4.3. Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.4. Ծառայությունների մատուցումից հետո Պատվիրատուին հանձնել նաև դրանց վերաբերող փաստաթղթերը:

3.4.5. Ծրագրային ապահովման մեջ խափանումների և սխալների հայտնաբերման դեպքերում (բացի տեխնիկական և ծրագրային միջոցների անհամատեղելիության, տեխնիկական միջոցների խափանումների, ծրագրային վիրուսների, աշխատակիցների՝ ծրագրով չնախատեսված գործողությունների պատճառով առաջացած դեպքերի) վերացնել դրանք ապագա տարբերակներում:

3.4.6. Տրամադրել Պատվիրատուին Համակարգի այն տարբերակները, որոնք լույս են տեսել մինչև Պայմանագրի ավարտը:

3.4.7. Պայմանագիրը հաստատելուց հետո 3 ամսվա ընթացքում Պատվիրատուի մեկ աշխատակից կարող է մասնակցել Կատարողի կողմից կազմակերպվող ՀԾ-Հաշվապահ Համակարգի դասընթացին, որի արժեքը ներառված է պայմանագրի 2.1 կետում նշված գումարի մեջ: Կատարողը պարտավորվում է սկսել Համակարգի դասընթացը ոչ ուշ քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում՝ Պատվիրատուի աշխատակցի գրանցման օրվանից սկսած:

3.4.8. Պայմանագիրը հաստատելուց հետո 6 ամսվա ընթացքում Պատվիրատուն կարող է հետ վերադարձնել Համակարգը՝ ետ ստանալով վճարված գումարը: Եթե Պատվիրատուի աշխատակիցները մասնակցել են 3.4.7 կետում նշված դասընթացին, ապա հետ վերադարձվող գումարը կազմում է 253,200.00 դրամ:

3.4.9. Համակարգի հետ տրամադրվող էլեկտրոնային բանալու օգտագործման երաշխիքային ժամկետը կազմում է 6 ամիս՝ սկսած պայմանագիրը հաստատելու օրվանից: Եթե այդ ժամկետի ընթացքում էլեկտրոնային բանալու աշխատանքում հայտնաբերվեն թերություններ, ապա այն «Պատվիրատու»-ի կողմից անվճար կփոխանակվի: Տվյալ երաշխիքը չի գործում հետևյալ դեպքերում՝

ա) եթե էլեկտրոնային բանալու վնասվածքը ոչ նպատակային շահագործման հետևանք է,

բ) եթե չեն պահպանվել էլեկտրոնային բանալու շահագործման կանոնները և պայմանները,

գ) եթե վնասվածքը հետևանք է լարման տատանումների, ջրհեղեղի, հրդեհի, ոչ օրշտ ջերսայրս ռեժիմի և այլ նման պատճառների: 6 ամսվա ժամկետն անցնելուց հետո էլեկտրոնային բանալու փոխանակումը կատարվում է վճարելով փոխանակման օրվա դրությամբ սահմանված նրա արժեքը:

3.4.10. Համակարգի սպասարկումը Ծառայությունները չեն ներառում Պատվիրատուի խորհրդատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

3.4.10.1. Հաշվապահական և հարկային հաշվառման վարման մեթոդաբանություն

3.4.10.2. Համակարգի հետ աշխատանքի տարրերի ուսուցում

3.4.10.3. Համակարգին շահագործման հետ չկապված՝ Windows օպերացիոն Համակարգի օգտագործում

3.4.10.4. Տեխնիկական միջոցների և համակարգչային ցանցի ոչ նորմալ աշխատանք:

3.4.11. Կատարողը Համակարգը Պատվիրատուին է հանձնում անժամկետ օգտագործելու իրավունքով:

3.4.12. Պայմանագրի ավարտից հետո Կատարողը Պատվիրատուի նկատմամբ որևէ պարտավորություն չի կրում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման որակի և սույն պայմանագրի հավելված № 2-ով սահմանված ժամկետի պահպանման համար:

4.2. Սույն պայմանագրով նախատեսված՝Կատարողի նկատմամբ հաշվարկված տույժերը և տուգանքները հաշվարկվում և հաշվանցվում են Համակարգի հանձնման և Ծառայությունների մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

4.3. Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 2.1 կետում նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով, իսկ Ծառայությունների մատուցման ժամկետները խախտելու համար՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի չկատարված մասի գնի 0.05 տոկոսի չափով:

4.4. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի հավելված № 2-ով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 տոկոսի չափով:

4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.6. Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները,գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

6.2. Կատարողը պատասխանատվություն է կրում Պատվիրատուի հանդեպ միայն ուղղակի վնասի համար, որը սահմանափակված է տվյալ Պայմանագրով սահմանված գումարի 20 (քսան) տոկոսով:

6.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված

խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

6.4. Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.5. Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀՀ դատարաններում:

6.6. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.7. Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

ա) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

բ) պայմանագրով նախատեսված աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

6.8. Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

6.9. Եթե պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և պայմանագրի կողմը չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա պատվիրատուն պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

6.10. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.11. Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի № 1, 2, 3 և 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	Ք. Երևան, Չարենցի 1
Ք. Երևան Տերյան 89	«Հայկական ծրագրեր» ՍՊԸ
Կենտրոնական գանձապետարանի	ՀՀ, Ք. Երևան, Չարենցի 1
գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011522092	ՀՀ 15100001960150100
ՀՎՀՀ 01541632	ՀՎՀՀ 00807555
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված №1
« » մայիսի 2012 թ. կնքված
№ ՀՀ ՔԾԻՍ ԾՁԲ-17 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհրդի աշխատակազմի ղեկավար
_____ Ս. Յազերյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի
տնօրեն
_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.1. Գնման առարկան՝ ապրանքի և ծառայության անվանումը	**«ՀԾ-Հաշվապահ» Համակարգ և սպասարկում**
1.2. Գնման առարկայի՝ ապրանքի և ծառայության մանրամասն նկարագիրը	Համակարգ 1 (մեկ) աշխատատեղի համար, ինչը ներառում է. • լազերային սկավառակ, որը պարունակում է Համակարգի տեղադրման ծրագիրը, • էլեկտրոնային բանալի, • օգտագործման ձեռնարկ, • Համակարգի դասընթացին մասնակցելու 1 կտրոն:
2. Գնման առարկայի՝ ծառայությունը մատուցողին ներկայացվող պահանջը	• Համակարգի ընթացիկ շահագործման հետ կապված խորհրդատվություն: • Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում, որտեղ արտացոլված են հաշվապահական և հարկային հաշվառմանը վերաբերվող լրամշակումները և նոր ֆունկցիոնալ հնարավորությունները: • Համակարգի սպասարկման աշխատանքները իրականացվում են հեռահաղորդակցության (հեռախոսակապ, ինտերնետ, էլ.փոստ և այլն) միջոցներով: • Համակարգի թարմացված տարբերակների տրամադրում և այդ նպատակով սեմինարների կազմակերպում:
3. Ապրանքի հանձնման և ծառայությունների մատուցման վայրը	Կատարողի գրասենյակում

Հաշվապահական հաշվառման և
ֆինանսական բանժնի պետ՝ Գ. Մանուկյան

Հավելված N
« » մայիսի 2012 թ. կնքված
№ ՀՀ ՔԾԽ ԾՁԲ-17 պայմանագրի

ՀԱՍՏԱՏՈՒՄ
ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհրդի աշխատակազմի ղեկավար
_____ Ս. Յազերյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի
տնօրեն
_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

հ/հ	Գնման առարկայի՝ ապրանքի և ծառայության անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է գնել 2012 թվականին 2-րդ եռամսյակում		Ընդամենը	
				քանակը	գինը	քանակը	գինը
1.	«ՀԾ-Հաշվապահ» Համակարգ, սպասարկում	դրամ	337,2	1	337,2	1	337,2
ԸՆԴԱՄԵՆԸ				1	**337,2**	1	**337,2**

Գլխավոր հաշվապահի ստորագրությունը՝ _____

Պատասխանատու ստորաբաժանման
ղեկավարի ստորագրությունը՝ _____

Հավելված
« » մայիսի 2012 թ. կնքված
№ ՀՀ ՔԾԽ ԾՁԲ-17 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքացիական ծառայության
խորհրդի աշխատակազմի ղեկավար

_____ Ս. Յազերյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի
տնօրեն

_____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

Հ/հ	Ձեռքբերվող ապրանքի և ծառայությունների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասա-կարգման հոդվածը	Ֆինանսավորումը Հայաստանի Հանրապետության 2012թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ (ըստ ամիսների աճողական կարգով)												Ընդամենը
			I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
			հունվար	փետր.	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբ.	հոկտեմբ.	նոյեմբեր	դեկտեմբեր	
1.	«ՀԾ-Հաշվապահ» Համակարգ, սպասարկում	4232	-	-	-	-	337,2	337,2	337,2	337,2	337,2	337,2	337,2	337,2	337,2
	Ընդամենը		**-**	**-**	**-**	**-**	**337,2**	**337,2**	**337,2**	**337,2**	**337,2**	**337,2**	**337,2**	**337,2**	**337,2**

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը՝ _____

Գլխավոր հաշվապահի ստորագրությունը՝ _____

Պատասխանատու ստորաբաժանման
ղեկավարի ստորագրությունը՝ _____